

## 6. ԿԵԱՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Թեև կեանքին կապուած զանազան երեւոյթները փիլիսոփայութեան ուշադրութեան առարկայ եղած են բոլոր ժամանակներու ընթացքին, սակայն որպէս եզր եւ իւրայատուկ փիլիսոփայական ուղղութիւն, *կեանքի փիլիսոփայութիւնը* (գերմ.՝ Lebensphilosophie, ֆրսս.՝ Philosophie de la Vie, անգլ.՝ Philosophie of Life) կը կազմուի 19-րդ դարու երկրորդ կիսուն՝ Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ: Այս ուղղութեան ծագումը եւ նպատակը նոյնինքն մարդկային գործնական կեանքն է:

Գերմանիոյ մէջ, կեանքի փիլիսոփայութեան հետ որոշ առնչութիւն ունեցած է՝ **Ա. Շոպենհաուր**, որ ինչպէս տեսանք, կը պատկանի գերմանական գաղափարապաշտութեան (German Idealism) ուղիին: Հետագային, այս ուղղութեան (Կեանքի փիլիսոփայութիւն) նշանաւոր փիլիսոփաները կը հանդիսանան՝ գերման **Վ. Դիլթայ** (Wilhelm Dilthey, 1833 – 1911 թ.) եւ **Ֆ. Նիցշէ** (Friedrich Nietzsche, 1844 – 1900 թ.):

Իսկ Ֆրանսայի մէջ նշանաւոր կը դառնայ՝ փիլիսոփայ **Հ. Բերգսոն** (Henri Bergson, 1859 – 1941 թ.), որու փիլիսոփայական տեսակետները, ժամանակի ընթացքին հիմնական փոփոխութիւններու ենթարկուեցան, ինչպէս քիչ ետք պիտի տեսնենք:

Ստորեւ, վերոյիշեալ երեք փիլիսոփաներուն մասին՝ որոշ մանրամասնութիւններ.-

### ➤ Վ. Դիլթայ

Գերման փիլիսոփայ ու աստուածաբան Դիլթայ, մեթոդական իւրայատուկ դրութեամբ մը, կը զանազանէ՝ բնական գիտութիւնները (անգլ.՝ Natural Sciences, գերմ.՝ Naturwissenschaft, ինչպէս՝ աստղագիտութիւն, բնագիտութիւն, քիմիագիտութիւն, երկրաբանութիւն, կենսաբանութիւն, եւայլն...), մարդասիրական - հումանիտար գիտութիւններէն (գերմ.՝ Geisteswissenschaft, անգլ.՝ Human Sciences / Humanities, ինչպէս՝ փիլիսոփայութիւն, ընկերաբանութիւն, պատմաբանութիւն, աստուածաբանութիւն, բանասիրութիւն, գրականագիտութիւն, եւայլն...):

Դիլթայի համաձայն, բնական եւ մարդասիրական գիտութիւնները ունին ճանաչողութեան տարբեր եղանակներ՝ մինչ մենք բնութիւնը կը բացատրենք (գերմ.՝ erklären, անգլ.՝ explain), հոգին սակայն, պէտք է հասկնանք (գերմ.՝ verstehen, անգլ.՝ understand, անշուշտ այստեղ, հոգեբանութիւնը իր կարեւոր դերը կը խաղայ): Այս իմաստով, մարդասիրական կամ հումանիտար գիտութիւնները կը հիմնաւորուին հետեւեալ եռեակ կապակցութեամբ.- *ապրում, արտայայտութիւն եւ հասկացողութիւն*.-

1) *Ապրումները* (գերմ.՝ Erleben, անգլ.՝ Experience), հոգիի կառուցուածքային միաւորներն են, ուր անհատի գիտակցութիւնը առկայ է, իր լման բովանդակութեամբ: